ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՍԱՀՄԱՆԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՐԳԸ

10.02.2014 14:12

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհուրդը 05.02.2014թ. 3/6-Լ որոշմամբ սահմանել է Փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ժամաքանակը և կարգը **(այսուհետև՝ Կարգ)**, որի 24-րդ կետի համաձայն՝

ՀՀ փաստաբանների պալատը չի ենթարկում կարգապահական պատասխանատվության վերապատրաստմանը չմասնակցած՝

- փաստաբանական գործունեություն չիրականացնող 70 տարին լրացած փաստաբաններին,
- փաստաբանական գործունեություն չիրականացնող առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող փաստաբաններին,
- մինչև ծննդաբերությունը երեք ամիս ժամանակով և ծննդաբերությունից հետո մեկ տարի ժամանակով կին փաստաբաններին (հաշվարկի համար հիմք է ընդունվելու մեկ ամիսը՝ երկու ժամ համամասնությունը),
- այլ պետությունում ուսուցում անցնող փաստաբաններին,
- ՀՀ փաստաբանական դպրոցի շրջանավարտ փաստաբաններին՝ Փաստաբանական դպրոցն ավարտելու պահից հաշված մեկ տարվա ընթացքում (հաշվարկի համար հիմք է ընդունվելու մեկ ամիսը՝ երկու ժամ համամասնությունը).
- մինչև հեռավար ձևով վերապատրաստման հնարավորություն ընձեռելը՝ այլ պետությունում մշտապես (մեկ տարվա ընթացքում 183 օրից ավել) բնակվող փաստաբաններին։

Կարգն ամբողջությամբ կարող եք բեռնել այստեղ

Պալատի խորհրդի կողմից 05.02.2014թ. ընդունված «Փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի վճարի, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների, ինչպես նաև այլ վճարների չափերը սահմանելու մասին» թիվ 3/8-Լ որոշմամբ որոշվել է՝...

1.1. 70 (յոթանասուն) տարին լրացած փաստաբանի ամսական անդամավճարի չափը սահմանել 0 (զրո)։

1.2. Առաջին կարգի հաշմանդամ փաստաբանի անդամավճարի չափը սահմանել 0 (զրո)։

Որոշումն ամբողջությամբ կարող եք բեռնել այստեղ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })